կնոջը տրամադրում է անվճար բժշկասոցիալական խորհրդատվություն՝ անցանկալի հղիությունից պաշտպանվելու միջոցների ընտրության վերաբերյալ:

ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄ

Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումը կարգավորվում է «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով, համաձայն որի վերոնշյալ օրենքը անհրաժեշտ է լրացնել 9.1 հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

Բուժաշխատողին (բժիշկ, բուժքույր) արգելվում է մինչև հղիության 30 շաբաթը լրանալը ապագա երեխայի սեռի վերաբերյալ գրավոր կամ բանավոր կամ որևէ այլ եղանակով տվյալներ ներկայացնել հղի կնոջը կամ նրա ընտանիքի անդամներին (ամուսին, քույր, եղբայր, հայր, մայր, երեխա) կամ երրորդ անձանց, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա են սեռի հետ կապված հիվանդության ժառանգման հավանականությունը կամ այլ բժշկական կամ սոցիալական ցուցումներ:

Խախտումը առաջացնում է օրենքով նախատեսված վարչական պատասխանատվություն, այն է՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսունապատիկից երեքհարյուրապատիկի չափով: Կրկին կատարելը վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար սահմանված տուգանքի կրկնապատիկի չափով»:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՐՈՂ ԵՔ ԴԻՄԵԼ.

ք. Երևան, Նալբանդյան 7, գրասենյակ 2, 0010
անվճար հեռախոսահամար (թեժ գիծ) 080001110,
հեռախոսահամար 010 540199,
ք. Կապան, Ա. Մանուկյան 1/72,
հեռախոսահամար 285 52511,
ք. Վանաձոր, Վարդանանց 82/1,
հեռախոսահամար 322 22317,
ք. Գյումրի, Տիգրան Մեծի 1/2,
հեռախոսահամար 312 58236,
ք. Գավառ, Բոշնաղյան 15,
հեռախոսահամար 264 25503

Նաև կարող եք այցելել www.ayla.am, www.iravaban.net վեբ կայքերը:

Սույն տեղեկատվական թերթիկը հնարավոր է դարձել հրապարակել Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Դաշնային Հանրապետության Դեսպանության կողմից «Կանանց իրավունքների օրակարգային հարցերի խթանում» ծրագրի իրականացման համար Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիային (այսուհետ՝ ՀԵԻԱ) տրամադրված դրամաշնորհի շրջանակներում: Բովանդակության համար պատասխանատու է ՀԵԻԱ-ն, և այն կարող է չարտացոլել Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Դաշնային Հանրապետության Դեսպանության կամ Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության տեսակետները:

Bundesrepublik Deutschland
Auswärtiges Amt

Human Rights

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա

ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՇԱՐՔ
1

Վերարտադրողական իրավունքներ, սեռով պայմանավորված աբորտի օրենսդրական կարգավորում

Սույն տեղեկատվական թերթիկում ներկայացվում են վերարտադրողականության հետ կապված կանանց իրավունքների, անվտանգ մայրության, հղիության արհեստական ընդհատման (այդ թվում՝ սեռով պայմանավորված) օրենսդրական կարգավորումը:

Իմացե՛ք և պաշտպանե՛ք Ձեր իրավունքները:

Աջակցե՛ք կանանց իրավունքների խթանմանը:

Ստացե՛ք անվճար իրավաբանական օգնություն:

Մայիս 2015

ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Վերարտադրողականության հետ կապված կանանց իրավունքները կարգավորվում են «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք), որի 4-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի կենսական անհրաժեշտության սեռական և վերարտադրողական հետևյալ իրավունքները.

1) ինքնուրույն տնօրինել իր սեռական ու վերարտադրողական կյանքը, եթե դա չի վտանգում այլոց առողջությանը.

2) ընտանիք կազմել, ինքնուրույն որոշել իր երեխաների թիվն ու նրանց ծնվելու ժամկետները և այդ նպատակով ունենալ պտղաբերության կարգավորման ապահով ու արդյունավետ ծառայություններից օգտվելու հնարավորություն.

3) պաշտպանված լինել ճնշման բոլոր ձևերից, այդ թվում՝ սեռական շահագործումից և բռնությունից, հարկադրական հղիությունից, աբորտից, ամլացումից և վերարտադրողականության իրավունքների այլ խախտումներից.

4) ստանալ հավաստի և ամբողջական տեղեկատվություն սեռական և վերարտադրողական առողջության հարցերի շուրջ, այդ թվում՝ պտղաբերության կարգավորման առկա մեթոդների առավելությունների, արդյունավետության և հնարավոր վտանգների վերաբերյալ.

5) ստանալ բժշկական խորհրդատվություն և ծառայություններ սեռական և վերարտադրողական առողջության հարցերի շուրջ՝ մեկուսի ու գաղտնի պայմաններում.

6) օգտվել բարձրորակ բուժկանխարգելիչ ծառայություններից և պաշտպանված լինել առողջության համար վտանգ ներկայացնող մեթոդների, այդ թվում՝ գիտական փորձերի կիրառումից.

7) ինքնուրույն որոշումներ կայացնել սեռական և վերարտադրողական առողջության հետ կապված բժշկական միջամտություններ ստանալիս, բացառությամբ կյանքին սպառնացող շտապ միջամտություն պահանջող իրավիճակների և Օրենքով նախատեսված այլ դեպքերի.

8) օգտվել վերարտադրողականության նոր տեխնոլոգիաներից, ներառյալ՝ պտղաբերության կարգավորման ապահով և արդյունավետ մեթոդներից, ինչպես նաև անպտղության բուժման համար կիրառվող վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից:

ԱՆՎՏԱՆԳ ՄԱՅՐՈՒԹՅՈՒՆԸ

Օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝

1. Մայրությունը և մանկությունը գտնվում են պետության և հասարակության հովանավորության ու պաշտպանության ներքո և աջակցություն ստանալու իրավունք ունեն:

2. Կինն ունի անվտանգ մայրության, այն է՝ հղիության ընթացքում առողջության պահպանման, ծննդաբերության և հետծննդյան ժամանակաշրջանում իր, պտղի առողջությանը և նորածնին նվազագույն ռիսկ պատճառող մեթոդների կիրառմամբ օգնություն ստանալու իրավունք: Կինն իրավունք ունի տեղեկություն ստանալու կրծքով կերակրման առավելությունների, ինչպես նաև մանուկների և վաղ տարիքի երեխաների առողջ և անվտանգ սնուցման վերաբերյալ:

3. Հղիության ընթացքում ցանկացած բժշկական միջամտություն կատարվում է կնոջ համաձայնությամբ: Կինն իրավունք ունի հրաժարվել բժշկական միջամտությունից կամ պահանջել ընդհատել այն:

4. Առանց հղի կնոջ համաձայնության, բժշկական հանձնաժողովի որոշմամբ, դրա անհնարինության դեպքում՝ բժշկի որոշմամբ, թույլատրվում է իրականացնել բժշկական միջամտություն հղի կնոջ կյանքին սպառնացող վտանգի, ինչպես նաև շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների դեպքերում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Բժշկական միջամտությունից հրաժարվելու փաստը՝ հնարավոր հետևանքների նշումով, գրանցվում է բժշկական փաստաթղթերում և գրավոր հավաստվում հղի կնոջ, դրա անհնարինության դեպքում՝ նրա ամուսնու կամ հարազատների, իսկ վերջինիս անհնարինության դեպքում՝ բուժանձնակազմի կազմած արձանագրությամբ:

6. Կինն իրավունք ունի հղիության ընթացքում ստանալ հղիության և ծննդաբերության հետ կապված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում՝ պետության երաշխավորած առողջապահական նպատակային ծրագրերի շրջանակներում:

ՀՂԻՈՒԹՅԱՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄԸ

«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր կին ունի հղիության արհեստական ընդհատման իրավունք:

2. Հղիության արհեստական ընդհատումը մինչև 12 շաբաթական հղիության ժամկետը կատարվում է կնոջ դիմումի համաձայն:

3. Հղիության արհեստական ընդհատումը մինչև 22 շաբաթական հղիության ժամկետը կարող է կատարվել բժշկասոցիալական ցուցումների դեպքում՝ կնոջ համաձայնությամբ:

4. Հղիության արհեստական ընդհատումն անչափահասի դիմումով կատարվում է նրա ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների համաձայնությամբ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ բժշկական հանձնաժողովի արձանագրության հիման վրա:

5. Հղիության արհեստական ընդհատումից առաջ և հետո առողջապահական հաստատությունը